ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Անուշավան Եղիազարյան, գլխավոր վերահսկող.

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ ՌԴ ք.Մոսկվա, ԱՊՀ գործադիր կոմիտեի բաժանմունք, 16.03.-28.03.2025թ..

3. Հրավիրող կողմը՝ ԱՊՀ գործադիր կոմիտե.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի բաժանմունքի 2023-2024թթ. ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգում.

5. Քննարկված թեմաները՝ բաժանմունքի բանկային գործառնությունների և կապի հոդվածով իրականացված ծախսերի հիմնավորվածության ստուգում.

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ հանդիպումներ ԱՊՀ գործադիր կոմիտեի գլխավոր քարտուղարի, բաժանմունքի աշխատակազմի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի Հանրապետությունների և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչների (ստուգող խմբի անդամներ) հետ հանդիպում, ստուգման աշխատանքների համատեղ իրականացում, ստուգման արդյունքների համատեղ քննարկում.

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ ստուգող խմբի նախագահողի ընտրության և ստուգման ծրագրի հաստատման վերաբերյալ որոշման 17.03.2025թ. N 1 արձանագրություն, ստուգող խմբի նախագահողի կողմից 17.03.2025թ. վավերացված ստուգման ծրագիր, ԱՊՀ գործադիր կոմիտեի բաժանմունքի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգման արդյունքների վերաբերյալ 28.03.2025թ. համատեղ ստորագրված ակտ.

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ այդպիսիք չկան:

01.04.2025թ.